

ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ

Ներքին աուդիտի բաժնի պետ (ծածկագիր՝ 67-2.2-49)

Գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 67-2.3-47)

Ներքին աուդիտի բաժնի պետ (ծածկագիր՝ 67-2.2-49)

Ապահովում է ներքին աուդիտի կանոնակարգի նախագծի, ներքին աուդիտի ռազմավարական ու տարեկան ծրագրերի կազմումը և այն Մարզպետին ու Ներքին աուդիտի կոմիտե ներկայացնելը: Յուրաքանչյուր աուդիտի համար մշակում և սահմանում է առաջադրանք՝ նշելով դրա իրականացման շրջանակը, խնդիրները, տևողությունը և տրամադրված ռեսուրսները, աուդիտի մոտեցումներն ու տեխնիկան, աուդիտի տեսակն ու ծավալը: Ներքին աուդիտորների միջև կատարում է իրականացման ենթակա աուդիտորական առաջադրանքների բաժանում: Աուդիտի ավարտից հետո ապահովում է հաշվետվության կազմումը՝ նախապես այն քննարկելով աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ, և տրամադրում է Մարզպետին, ինչպես նաև աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարին: Հետևում է ներքին աուդիտի իրականացման տարեկան ծրագրի իրականացմանը: Կազմում և Մարզպետին ու Ներքին աուդիտի կոմիտե է ներկայացնում ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն՝ տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենտ)

մասնագիտությունների գծով կամ իրավագիտություն մասնագիտությամբ,

* առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ աուդիտի ոլորտում,

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 12.1 ենթակետին հաջորդող 1-ին պարբերությունը),

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

* «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի

1-ին կամ 3-րդ մասով սահմանված պահանջների բավարարում:

Մրցույթը կկայանա 11.01.2018թ.՝ ժամը 14:30-ին, Խորհրդի շենքում (ք. Երևան, Տերյան 89):

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության

գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 67-2.3-47)

Իրականացնում է ՀՀ Շիրակի մարզի տարածքում գյուղատնտեսության բնագավառին առնչվող օրենսդրական և իրավական ակտերի կատարման աշխատանքները: Իրականացնում է մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցման, պահպանման և շահագործման աշխատանքները, միջոցներ է ձեռնարկում

հանրապետական նշանակության ոռոգման համակարգերի նպատակային շահագործման ուղղությամբ:

Իրականացնում է Մարզի տարածքում ջրատնտեսական և ոռոգման կազմակերպությունների գործունեությանն աջակցելու աշխատանքները: Իրականացնում է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլխիտների դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման և ագրոկանոնների պահպանմանն ուղղված աշխատանքներ: Իրականացնում է համագործակցություն պետական լիազորված մարմնի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի բնագավառում:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն՝ գյուղական և ձկնային տնտեսություն մասնագիտությունների գծով,

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 12.1 ենթակետին հաջորդող 2-րդ պարբերությունը),

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Մրցույթը կկայանա 24.01.2018թ.՝ ժամը 14:30-ին, Խորհրդի շենքում (ք. Երևան, Տերյան 89):

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝

* քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու

տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական

ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում

քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների,

խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ

քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ համայնքային

ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և

առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում

առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին՝

ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա

աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին՝ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում,
* քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ,
* տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
* համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
* անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
* անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

Դիմող ՀՀ քաղաքացիները ՔԾ խորհուրդ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
* դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
* տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
* մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
* անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացի մրցութին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցություններին ներկայանում են անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 930-ից մինչև 1230-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 13.12.2017թ.:

Մրցություններին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմ

(ք. Երևան, Տերյան 89, հեռ. (011) 54-11-38,

(011) 56-64-62) կամ այցելել Խորհրդի պաշտոնական ինտերնետային կայք (www.csc.am):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցություններին մասնակցելու համար

ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները չեն վերադարձվում